



ՏԵՂԵԿԱՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏԵՂԵԿԱՆՔ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
2. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	3
3. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	7
4. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	13
5. ԱՄՓՈՓՈՒՄ	14

1. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երևան քաղաքը, ինչպես Հայաստանի Հանրապետության մյուս բնակավայրերը, այսօր կանգնած է լրջագույն մարտահրավերների առջև: Դեռևս լուծված չեն արդիական տրանսպորտային համակարգի ներդրման, քաղաքի ճարտարապետական տեսքի բարելավման, կանաչ տարածքների մակերեսի ավելացման, աղբահանության արդյունավետ ենթակառուցվածքի ձևավորման և այլ խնդիրներ: Ակնհայտ է, որ քաղաքի բյուջեն, ընդհանուր առմամբ, բավարար չէ այս հիմնախնդիրների ակնթարթային և ամբողջական լուծման համար: Սակայն, ուսումնասիրելով Երևանի բյուջեի 2020 թվականի և նախորդ տարիների կատարման հաշվետվությունները, պարզ է դառնում, որ նույնիսկ առկա ֆինանսական ռեսուրսները օգտագործվում են ոչ արդյունավետ, իսկ եկամուտների հավաքագրումը և ծախսերի իրականացումը ուղեկցվում է էական թերացումներով:

**Աղյուսակ 1. Երևանի բյուջեի հիմնական ցուցանիշները
և դրանց կատարողականը 2020թ. (մլն դրամ)¹**

	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտները, այդ թվում՝	107,146.8	84,941.6	73,364.3	86.4%
Վարչական բյուջե	104,969.1	82,703.9	73,297.6	88.6%
Ֆոնդային բյուջե	2,177.7	2,512.7	66.7	2.7%
Ծախսերը, այդ թվում՝	116,259.6	101,308.5	64,300.8	63.5%
Վարչական բյուջե	104,969.1	82,727.3	66,461.4	80.3%
Ֆոնդային բյուջե	11,290.5	18,856.1	-2,160.6	-
Ընդամենը հավելուրդը կամ պակասուրդը	-9,112.8	-16,366.9	9,063.5	-

Երևանի բյուջեի եկամուտների՝ 2020 թվականի հաստատված պլանը կազմել է 107.1 մլրդ դրամ, իսկ ճշտված պլանը՝ 84.9 մլրդ դրամ (Աղյուսակ 1): Այլ կերպ ասած՝ տարվա ընթացքում նվազման ուղղությամբ կատարվել է էական՝ 20.7%-ի ճզգրտում: Նույնիսկ այս պարագայում, սակայն, եկամուտների փաստացի

¹ Վարչական և ֆոնդային բյուջեների գումարն ավելի մեծ է, քան ընդամենը բյուջեինը, քանի որ ընդհանուր ծախսերը նվազեցվում են վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կատարված հատկացումների և ֆոնդային բյուջեի եկամուտ համարվող ակտիվների իրացումից ստացվող մուտքերի չափով: Անհրաժեշտ է նշել, որ եկամուտների ճշտված պլանի պարագայում վարչական և ֆոնդային բյուջեների գումարը գերազանցում է ընդհանուր ցուցանիշը 275.0 մլն դրամով: Սակայն սա որևէ ազդեցություն չունի բյուջետային հաշվեկշռի հաշվարկում, քանի որ ծախսերի ճշտված պլանի վարչական և ֆոնդային բյուջեների հանրագումարը շեղվում է ընդհանուր ցուցանիշից ճիշտ նույն մեծությամբ:

հավաքագրումը ճշտված պլանի նկատմամբ կատարվել է շոշափելի թերացումով՝ միայն 86.4%-ով՝ կազմելով 73.4 մլրդ դրամ: Ընդ որում, եկամուտների վարչական մասի կատարողականը եղել է փոքր-ինչ ավելի բարվոք՝ 88.6%: Փոխարենը, ֆոնդային բյուջեի պարագայում արձանագրվել է չափազանց ցածր կատարողական՝ ընդամենը 2.7%:

Ծախսերի՝ 2020 թվականի հաստատված պլանը կազմել է 116.3 մլրդ դրամ, իսկ ճշտված պլանը՝ 101.3 մլրդ դրամ (Աղյուսակ 1): Սա նշանակում է, որ ծախսերի պարագայում 2020 թվականի բյուջետային ցուցանիշը ճշգրտվել է ավելի համեստ չափով՝ 12.9%-ով: Խիստ մտահոգիչ է այն հանգամանքը, որ փաստացի իրականացվել է տարեկան ճշտված պլանի միայն 63.5%-ը, այսինքն՝ 64.3 մլրդ դրամ: Ծախսերի կառուցվածքի մասով նշենք, որ վարչական բյուջեն կատարվել է 80.3%-ով, իսկ ֆոնդային բյուջեի ցուցանիշը ընդունել է բացասական արժեք, քանի որ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը 2.2 մլրդ դրամով գերազանցել են կապիտալ բնույթի ծախսերը:

Երևանի՝ 2020 թվականի բյուջեով նախատեսվում էր պակասորդ՝ 9.1 մլրդ դրամի չափով (Աղյուսակ 1): Տարվա ընթացքում այն ճշգրտվել է աճի ուղղությամբ՝ հասնելով 16.4 մլրդ դրամի: Սակայն հակառակ բյուջետային պլանավորման գործընթացում ձևավորված սպասումներին՝ տարին ամփոփվել է բյուջետային հավելուրդով՝ 9.1 մլրդ դրամի մեծությամբ՝ պայմանավորված եկամուտների համեմատ ծախսերի ավելի շոշափելի թերակատարմամբ:


Այսպիսով, Երևանի 2020 թվականի բյուջեն թերակատարվել է ինչպես ընդհանուր ծախսերի, այնպես էլ ընդհանուր եկամուտների ուղղությամբ: Նախանշված բյուջետային պակասորդի փոխարեն ձևավորվել է հավելուրդ, քանի որ փաստացի ծախսերը շեղվել են տարեկան ճշտված պլանից 36.5%-ով՝ եկամուտների 13.6% անհամապատասխանության դիմաց: Հարկ է նկատել, որ ծախսերի թերակատարման այս մակարդակը հնարավոր չէ բացատրել միայն նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի և Ադրբեջանի կողմից 2020-ի սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմի գործոններով: Ակնհայտ է, որ քաղաքապետարանի բյուջետային պլանավորման և ծրագրերի իրականացման կարողությունները չեն համապատասխանում քաղաքի առջև ծառայած խնդիրներին և ժամանակի պահանջներին:

2. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Ինչպես գիտենք, համայնքային բյուջեների եկամտային մասը կազմված է 3 հիմնական հոդվածներից՝ *հարկեր և տուրքեր*, *պաշտոնական դրամաշնորհներ* և *այլ եկամուտներ*: 2020 թվականի արդյունքներով՝ հարկերի և տուրքերի փաստացի ցուցանիշը կազմել է 16.9 մլրդ դրամ կամ համայնքային բյուջեի ընդհանուր եկամուտների 23.1%-ը: Պաշտոնական դրամաշնորհների փաստացի հավաքագրումը կազմել է 22.6 մլրդ դրամ, ինչը համարժեք է եկամուտների 30.8%-ին: Եվ վերջապես, բյուջեի փաստացի եկամուտների 46.1%-ը՝ 33.8 մլրդ դրամ, բաժին է ընկել «այլ եկամուտներ» հոդվածին (Գծապատկեր 1):

Ընդ որում, հարկերի և տուրքերի հարաբերական ծավալի՝ 23.1%-ի 6.6 տոկոսային կետը ձևավորվել է ի հաշիվ «գույքային հարկեր անշարժ գույքից» հոդվածի, 11.8 տոկոսային կետը՝ «գույքային հարկեր այլ գույքից» հոդվածի, 4.2 տոկոսային կետը՝ «տեղական տուրքերի», 0.5 տոկոսային կետը՝ «համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերի»: Այլ եկամուտների պարագայում 46.1%-ի 0.3 տոկոսային կետը պայմանավորված է «շահաբաժիններով», 1.3 տոկոսային կետը՝ «գույքի վարձակալության դիմաց ստացված եկամուտներով», 35.8 տոկոսային կետը՝ «համայնքի բյուջեի եկամուտներով՝ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից», 7.3 տոկոսային կետը՝ «վարչական գանձումներով», 0.7 տոկոսային կետը՝ «տույժերով և տուգանքներով», 0.7 տոկոսային կետը՝ «այլ եկամուտներով»: Ինչ վերաբերում է պաշտոնական դրամաշնորհների կառուցվածքին, ապա այն չունի առանձնահատուկ կարևորություն, ուստի այստեղ չի դիտարկվում:

Գծապատկեր 1. Երևանի բյուջեի եկամուտների կառուցվածքը 2020թ.



Նախքան առանձին եկամտային հոդվածների կատարողականի ուսումնասիրությունը՝ կրկին նշենք, որ ճշտված պլանի նկատմամբ ընդհանուր եկամուտների հավաքագրումը կազմել է 86.4%՝ 73,364.3 մլն դրամ՝ 84,941.6 մլն դրամի դիմաց (Աղյուսակ 2): Ընդ որում, 13.6% թերակատարման 1.8 տոկոսային կետը թելադրված է հարկերի և տուրքերի փաստացի և ճշտված ցուցանիշների 8.1% ճեղքվածքով, 2.9 տոկոսային կետը՝ պաշտոնական դրամաշնորհների 9.7% ճեղքվածքով, 9.0 տոկոսային կետը՝ այլ եկամուտների 18.4% ճեղքվածքով:

**Աղյուսակ 2. Երևանի բյուջեի եկամուտները
և դրանց կատարողականը 2020թ. (մլն դրամ)**

Եկամտային հոդվածները	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտներ, այդ թվում՝	107,146.8	84,941.6	73,364.3	68.5%	86.4%
Հարկեր և տուրքեր, այդ թվում՝	18,429.4	18,429.4	16,934.2	91.9%	91.9%
Գույքային հարկեր անշարժ գույքից	5,850.8	5,850.8	4,819.7	82.4%	82.4%
Գույքային հարկեր այլ գույքից	8,963.2	8,963.2	8,650.3	96.5%	96.5%
Տեղական տուրքեր	3,158.4	3,158.4	3,090.5	97.8%	97.8%
Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր	457.0	457.0	373.6	81.8%	81.8%
Պաշտոնական դրամաշնորհներ	24,015.4	25,063.2	22,624.1	94.2%	90.3%
Այլ եկամուտներ, այդ թվում՝	64,702.0	41,449.0	33,806.1	52.2%	81.6%
Շահաբաժիններ	121.4	121.4	203.5	167.6%	167.6%
Գույքի վարձակալությունից	1,123.0	1,123.0	926.6	82.5%	82.5%
Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (պատվիրակված լիազորություններ)	56,111.1	32,858.1	26,233.4	46.8%	79.8%
Վարչական գանձումներ	5,847.4	5,847.4	5,364.9	91.7%	91.7%
Տույժեր, տուգանքներ	510.6	510.6	506.8	99.3%	99.3%
Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	0.0	32.0	-	-
Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	12.0	12.0	2.5	20.8%	20.8%
Այլ եկամուտներ	976.5	976.5	536.3	54.9%	54.9%

Հարկերի և տուրքերի 8.1% թերակատարումը (16,934.2 մլն դրամ՝ 18,429.4 մլն դրամի դիմաց) ունի հետևյալ կառուցվածքը (հաշվարկները՝ ըստ Աղյուսակ 2-ի)։

- 5.6 տոկոսային կետ՝ «գույքային հարկեր անշարժ գույքից» հողվածի թերակատարում 17.6%-ով (4,819.7 մլն դրամ՝ 5,850.8 մլն դրամի դիմաց),
- 1.7 տոկոսային կետ՝ «գույքային հարկեր այլ գույքից» հողվածի թերակատարում 3.5%-ով (8,650.3 մլն դրամ՝ 8,963.2 մլն դրամի դիմաց),
- 0.4 տոկոսային կետ՝ «տեղական տուրքեր» հողվածի թերակատարում 2.2%-ով (3,090.5 մլն դրամ՝ 3,158.4 մլն դրամի դիմաց),
- 0.5 տոկոսային կետ՝ «համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր» հողվածի թերակատարում 18.2%-ով (373.6 մլն դրամ՝ 457.0 մլն դրամի դիմաց)։

Պաշտոնական դրամաշնորհների 9.7% թերակատարումը (22,624.1 մլն դրամ՝ 25,063.2 մլն դրամի դիմաց) ունի հետևյալ կառուցվածքը։

- 0.8 տոկոսային կետ՝ «համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով» հողվածի թերակատարում 48.2%-ով (210.7 մլն դրամ՝ 406.9 մլն դրամի դիմաց),
- 0.4 տոկոսային կետ՝ «պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» հողվածի թերակատարում 1.1%-ով (8,263.0 մլն դրամ՝ 8,355.3 մլն դրամի դիմաց),
- 2.4 տոկոսային կետ՝ «պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)» հողվածի թերակատարում 90.9%-ով (60.0 մլն դրամ՝ 660.0 մլն դրամի դիմաց),
- 6.2 տոկոսային կետ՝ «համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով» հողվածի թերակատարում 100.0%-ով (-՝ 1,550.7 մլն դրամի դիմաց)։

Այլ եկամուտների 18.4% թերակատարումը (33,806.1 մլն դրամ՝ 41,449.0 մլն դրամի դիմաց) հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով (հաշվարկները՝ ըստ Աղյուսակ 2-ի)։

- 0.5 տոկոսային կետ՝ «գույքի վարձակալության դիմաց ստացված եկամուտներ» հողվածի թերակատարում 17.5%-ով (926.6 մլն դրամ՝ 1,123.0 մլն դրամի դիմաց),

- 16.0 տոկոսային կետ՝ «համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (պատվիրակված լիազորություններ)» հոդվածի թերակատարում 20.2%-ով (26,233.4 մլն դրամ՝ 32,858.1 մլն դրամի դիմաց),
- 1.2 տոկոսային կետ՝ «վարչական գանձումներ» հոդվածի թերակատարում 8.3%-ով (5,364.9 մլն դրամ՝ 5,847.4 մլն դրամի դիմաց),
- 1.1 տոկոսային կետ՝ «այլ եկամուտներ» հոդվածի թերակատարում 45.1%-ով (536.3 մլն դրամ՝ 976.5 մլն դրամի դիմաց),
- 0.2 տոկոսային կետով հակազդում՝ պայմանավորված շահաբաժինների 67.6% աճով (203.5 մլն դրամ՝ 121.4 մլն դրամի դիմաց):

Նշենք նաև, որ Երևան քաղաքի 2020 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել էին 27,020.2 մլն դրամի չափով, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 24,529.0 մլն դրամ կամ 90.8%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը զիջում է 2019 թվականի համապատասխան ցուցանիշին 474.0 մլն դրամով:

Հատկանշական է, որ ճշտված պլանի նկատմամբ եկամուտների էական թերակատարումը արձանագրվել է մի իրավիճակում, երբ եկամտային հոդվածների մեծ մասի ճշտված պլանը կա՛մ նվազեցվել է հաստատվածի նկատմամբ, կա՛մ թողնվել է անփոփոխ: Սա նշանակում է, որ եկամուտների կատարողականը հաստատված պլանի նկատմամբ շատ ավելի խնդրահարույց է: Մասնավորապես, չնայած այլ եկամուտների «համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (պատվիրակված լիազորություններ)» ենթահոդվածը նվազման ուղղությամբ ճշտվել է 41.4%-ով՝ կազմելով 32,858.1 մլն դրամ՝ 56,111.1 մլն դրամի դիմաց, այդուհանդերձ, ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է միայն 79.8%: Բացառություն է պաշտոնական դրամաշնորհների հոդվածը, երբ պլանային ցուցանիշի բարձրացման ներքո առավել բարվոք կատարողական է գրանցվել հաստատված, այլ ոչ թե ճշտված ծրագրի նկատմամբ (Աղյուսակ 2):

Այսպիսով, 2020 թվականին Երևան քաղաքի բյուջետային եկամուտները ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 13.6%-ով: Ընդ որում, թերակատարումը մեծ մասամբ պայմանավորված է *այլ եկամուտների* փաստացի և ճշտված ցուցանիշների ճեղքվածքով: Իսկապես, վերջինս «պատասխանատու» է ընդհանուր եկամուտների 13.6% թերակատարման 9.0 տոկոսային կետի համար: Մեծությամբ երկրորդ նպաստումը ձևավորել են պաշտոնական դրամաշնորհները՝ 2.9 տոկոսային կետ, իսկ հարկերին և տուրքերին բաժին է ընկնում եկամուտների թերակատարման 1.8 տոկոսային կետը: Այլ եկամուտների պարագայում թերակատարումը մեծ մասամբ պայմանավորված է «համայնքի բյուջեի


եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (պատվիրակված լիազորություններ)» հողվածով, պաշտոնական դրամաշնորհների պարագայում՝ «համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով» հողվածով, հարկերի և տուրքերի պարագայում՝ «գույքային հարկեր անշարժ գույքից» հողվածով:

3. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հիմնական հողվածներն են՝ ընթացիկ ծախսերը, ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերը և ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը: 2020 թվականի փաստացի արդյունքներով՝ ընդհանուր ծախսերը կազմել են 64.3 մլրդ դրամ: Ընդ որում, ընթացիկ ծախսերի փաստացի մեծությունը գնահատվել է 66.5 մլրդ դրամ, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերինը՝ 9.1 մլրդ դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերինը՝ -11.3 մլրդ դրամ (Գծապատկեր 2):


Հատկանշական է, որ ընթացիկ ծախսերի փաստացի ցուցանիշը գերազանցել է ընդհանուր ծախսերը 2.2 մլրդ դրամով: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ բյուջետային ծախսերի ֆոնդային մասը եղել է բացասական. հակառակ բյուջետային պլանավորման գործընթացում ձևավորված սպասումների՝ կապիտալ ծախսերը զիջել են ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերին՝ 2.2 մլրդ դրամով:

Գծապատկեր 2. Երևանի բյուջեի ծախսերի կառուցվածքը 2020թ.



Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի պարագայում դրամական ռեսուրսների գրեթե ողջ ծավալը ուղղվել է «հիմնական միջոցների» հավելաճին: Ինչ վերաբերում է ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերին, ապա դրանց «առյուծի բաժինը»՝ 97.5%-ը, հանդես է եկել «չարտադրված ակտիվների իրացումից մուտքերի» տեսքով:

Գծապատկեր 3. Երևանի բյուջեի ընթացիկ ծախսերի կառուցվածքը 2020թ.



Նախքան բյուջետային ծախսերի կատարողականը քննարկելը, նշենք, որ Երևանի 2020թ. բյուջեի ընթացիկ ծախսերի տնտեսագիտական դասակարգման

ամենամեծ հոդվածը «սուբսիդիաներն» է՝ 60.3% տեսակարար կշռով: Սրան հաջորդում է «ծառայությունների և ապրանքների ձեռքբերումը»՝ 14.5%, և «աշխատանքի վարձատրությունը»՝ 13.1% (Գծապատկեր 3):

Երևանի բյուջեի ծախսերը կատարվել են միայն 63.5%-ով՝ կազմելով 64,300.8 մլն դրամ՝ 101,308.5 մլն դրամ ճշտված պլանի դիմաց (Աղյուսակ 3): 36.5% թերակատարման 15.8 տոկոսային կետը պայմանավորված է ընթացիկ ծախսերի փաստացի և ճշտված ցուցանիշների 19.4% ճեղքվածքով, 13.4 տոկոսային կետը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 59.9% ճեղքվածքով, իսկ 7.3 տոկոսային կետը՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի բացարձակ արժեքի 188.3% գերակատարմամբ:

Աղյուսակ 3. Երևանի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, և դրանց կատարողականը 2020թ. (մլն դրամ)

Ծախսային հոդվածները՝ ըստ տնտեսագիտական դասակարգման	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Ծախսեր, այդ թվում՝	116,259.6	101,308.5	64,300.8	55.3%	63.5%
 Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	106,088.2	82,488.5	66,486.6	62.7%	80.6%
Աշխատանքի վարձատրություն	10,675.8	10,071.6	8,718.0	81.7%	86.6%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	13,294.2	12,911.7	9,649.9	72.6%	74.7%
Սուբսիդիաներ	43,149.8	43,780.7	40,108.7	93.0%	91.6%
Դրամաշնորհներ	92.4	596.4	564.5	611.2%	94.6%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	939.9	779.5	721.9	76.8%	92.6%
Այլ ծախսեր	37,936.1	14,348.6	6,723.6	17.7%	46.9%
 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում՝	14,092.4	22,741.0	9,117.8	64.7%	40.1%
Հիմնական միջոցներ	14,068.1	22,714.9	9,116.1	64.8%	40.1%
Պաշարներ	24.4	26.1	1.7	7.0%	6.5%
 Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր, այդ թվում՝	-3,921.0	-3,921.0	-11,303.6	288.3%	288.3%
Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-521.0	-521.0	-281.1	54.0%	54.0%
Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-3,400.0	-3,400.0	-11,022.4	324.2%	324.2%

Ընթացիկ ծախսերի 19.4% թերակատարումը (66,486.6 մլն դրամ՝ 82,488.5 մլն դրամի դիմաց) ունի հետևյալ կառուցվածքը (հաշվարկները՝ ըստ Աղյուսակ 3-ի).

- 1.6 տոկոսային կետ՝ «աշխատանքի վարձատրություն» հոդվածի թերակատարում 13.4%-ով (8,718.0 մլն դրամ՝ 10,071.6 մլն դրամի դիմաց),
- 4.0 տոկոսային կետ՝ «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» հոդվածի թերակատարում 25.3%-ով (9,649.9 մլն դրամ՝ 12,911.7 մլն դրամի դիմաց),
- 4.5 տոկոսային կետ՝ «սուբսիդիաներ» հոդվածի թերակատարում 8.4%-ով (40,108.7 մլն դրամ՝ 43,780.7 մլն դրամի դիմաց),
- 0.1 տոկոսային կետ՝ «սոցիալական նպաստների և կենսաթոշակներ» հոդվածի թերակատարում 7.4%-ով (721.9 մլն դրամ՝ 779.5 մլն դրամի դիմաց),
- 9.2 տոկոսային կետ՝ «այլ ծախսեր» հոդվածի թերակատարում 53.1%-ով (6,723.6 մլն դրամ՝ 14,348.6 մլն դրամի դիմաց):

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի 59.9% թերակատարումը (9,117.8 մլն դրամ՝ 22,741.0 մլն դրամի դիմաց) պայմանավորված է հետևյալ գործոններով (հաշվարկները՝ ըստ Աղյուսակ 3-ի).

- 59.8 տոկոսային կետ՝ «հիմնական միջոցների» գծով թերակատարում 59.9%-ով (9,116.1 մլն դրամ՝ 22,714.9 մլն դրամի դիմաց),
- 0.1 տոկոսային կետ՝ «պաշարների» գծով թերակատարում 93.5%-ով (1.7 մլն դրամ՝ 26.1 մլն դրամի դիմաց):

Ինչ վերաբերում է ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերին, ապա դրանց բացարձակ արժեքի աճը (գերակատարումը) 188.3%-ով (11,303.6 մլն դրամ՝ 3,921.0 մլն դրամի դիմաց) ունի հետևյալ նպաստումները (հաշվարկները՝ ըստ Աղյուսակ 3-ի).

- 194.4 տոկոսային կետ՝ «չարտադրված ակտիվների իրացումից մուտքերի» բացարձակ արժեքի աճ (գերակատարում) 224.2%-ով (11,022.4 մլն դրամ՝ 3,400.0 մլն դրամի դիմաց),
- 6.1 տոկոսային կետով հակազդում՝ պայմանավորված «հիմնական միջոցների իրացումից մուտքերի» բացարձակ արժեքի 46.0% նվազմամբ (թերակատարմամբ) (281.1 մլն դրամ՝ 521.0 մլն դրամի դիմաց):

Բյուջետային պլանավորման ցածր կարողությունների մասին է վկայում, օրինակ, այն փաստը, որ բյուջեի ընդհանուր ծախսերը նվազման ուղղությամբ ճշտվել են 12.9%-ով՝ կազմելով 101,308.5 մլն դրամ՝ 116,259.6 մլն դրամի դիմաց, սակայն փաստացի ծախսերը կազմել են ճշտված ծրագրի միայն 63.5%-ը: Նույն տրամաբանությամբ՝ ընթացիկ ծախսերի կատարողականը ճշտված պլանի

նկատմամբ կազմել է ընդամենը 80.6%՝ այն դեպքում, երբ ճշտված պլանը 22.2%-ով զիջել է հաստատվածին (կազմելով 82,488.5 մլն դրամ՝ 106,088.2 մլն դրամի դիմաց):

Անցնելով բյուջետային ծախսերի գործառնական դասակարգմանը՝ արձանագրենք, որ այս դեպքում ամենամեծ հողվածը «կրթությունն» է, որին բաժին է ընկնում ընդհանուր ծախսերի 47.6%-ը: Սրան հաջորդում են «շրջակա միջավայրի պաշտպանությանն» ուղղված ծախսերը՝ 15.0% տեսակարար կշռով, այնուհետև՝ «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին» ուղղված ծախսերը՝ 12.1% տեսակարար կշռով:

Աղյուսակ 4. Երևանի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման, և դրանց կատարողականը 2020թ. (մլն դրամ)

Ծախսային հոդվածները՝ ըստ գործառնական դասակարգման	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Ծախսեր, այդ թվում՝	116,259.6	101,308.5	64,300.8	55.3%	63.5%
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	10,262.0	9,940.2	7,799.0	76.0%	78.5%
Պաշտպանություն	41.6	89.8	36.9	88.9%	41.1%
Տնտեսական հարաբերություններ	25,568.7	25,502.0	2,533.8	9.9%	9.9%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	20,124.1	12,012.6	9,642.6	47.9%	80.3%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	8,863.2	6,488.3	4,894.7	55.2%	75.4%
Առողջապահություն	465.9	511.2	300.1	64.4%	58.7%
Հանգիստ, մշակույթ և կրոն	4,032.8	4,301.5	3,130.3	77.6%	72.8%
Կրթություն	34,089.4	34,460.3	30,577.8	89.7%	88.7%
Սոցիալական պաշտպանություն	2,364.8	2,392.2	1,344.4	56.9%	56.2%
Պահուստային ֆոնդեր	10,447.2	5,610.2	4,041.2	38.7%	72.0%

Ինչպես արդեն նշվել է, ծախսերի թերակատարումը 2020 թվականին կազմել է 36.5%: Գործառնական դասակարգման տեսանկյունից այս ճեղքվածքը բացատրվում է հետևյալ գործոններով (հաշվարկները՝ ըստ Աղյուսակ 4-ի).

- 2.1 տոկոսային կետ՝ «ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների» ծախսերի թերակատարում 21.5%-ով (7,799.0 մլն դրամ՝ 9,940.2 մլն դրամի դիմաց),

- 0.1 տոկոսային կետ՝ «պաշտպանության» ծախսերի թերակատարում 58.9%-ով (36.9 մլն դրամ՝ 89.8 մլն դրամի դիմաց),
- 22.7 տոկոսային կետ՝ «տնտեսական հարաբերությունների» ծախսերի թերակատարում 90.1%-ով (2,533.8 մլն դրամ՝ 25,502.0 մլն դրամի դիմաց),
- 2.3 տոկոսային կետ՝ «շրջակա միջավայրի պաշտպանության» ծախսերի թերակատարում 19.7%-ով (9,642.6 մլն դրամ՝ 12,012.6 մլն դրամի դիմաց),
- 1.6 տոկոսային կետ՝ «բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության» ծախսերի թերակատարում 24.6%-ով (4,894.7 մլն դրամ՝ 6,488.3 մլն դրամի դիմաց),
- 0.2 տոկոսային կետ՝ «առողջապահության» ծախսերի թերակատարում 41.3%-ով (300.1 մլն դրամ՝ 511.2 մլն դրամի դիմաց),
- 1.2 տոկոսային կետ՝ «հանգստի, մշակույթի և կրոնի» ծախսերի թերակատարում 27.2%-ով (3,130.3 մլն դրամ՝ 4,301.5 մլն դրամի դիմաց),
- 3.8 տոկոսային կետ՝ «կրթության» ծախսերի թերակատարում 11.3%-ով (30,577.8 մլն դրամ՝ 34,460.3 մլն դրամի դիմաց),
- 1.0 տոկոսային կետ՝ «սոցիալական պաշտպանության» ծախսերի թերակատարում 43.8%-ով (1,344.4 մլն դրամ՝ 2,392.2 մլն դրամի դիմաց),
- 1.5 տոկոսային կետ՝ «պահուստային ֆոնդերի» ծախսերի թերակատարում 28.0%-ով (4,041.2 մլն դրամ՝ 5,610.2 մլն դրամի դիմաց):

Նկատենք, որ ընդհանուր ծախսերի թերակատարման համատեքստում ամենամեծ նպաստումը ձևավորել է «տնտեսական հարաբերություններ» հոդվածը: Ընդ որում, վերջինիս 90.1% թերակատարման 40.2 տոկոսային կետը պայմանավորված է տրանսպորտի ոլորտին ուղղված ծախսերի փաստացի և ճշտված ցուցանիշների 46.0% ճեղքվածքով, իսկ 18.6 տոկոսային կետը՝ վառելիքի և էներգետիկայի ոլորտին առնչվող ծախսերի 97.1% ճեղքվածքով:

Հատկանշական է, որ եթե փաստացի ծախսերը համեմատվեն հաստատված, այլ ոչ թե ճշտված պլանի հետ, իրավիճակի գնահատականը կդառնա առավել վատատեսական: Բավական է նշել, որ հաստատված պլանի նկատմամբ ընդհանուր ծախսերը կատարվել են միայն 55.3%-ով, իսկ ընթացիկ ծախսերը՝ 62.7%-ով (Աղյուսակ 3): Գործառնական դասակարգման տեսանկյունից՝ «ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների» կատարողականը ավելի փոքր է հաստատված պլանի դեպքում և կազմում է 76.0% (Աղյուսակ 4): Համանման իրավիճակ է նաև «շրջակա միջավայրի պաշտպանության» և «բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության» ծախսերի պարագայում:

Այսպիսով, Երևանի բյուջեի ընդհանուր ծախսերը կատարվել են միայն 63.5%-ով: 36.5% թերակատարման 15.8 տոկոսային կետը պայմանավորված է ընթացիկ ծախսերի փաստացի և ճշտված ցուցանիշների ճեղքվածքով, 13.4 տոկոսային

կետը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ճեղքվածքով, իսկ 7.3 տոկոսային կետը՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի բացարձակ արժեքի գերակատարմամբ: Գործառնական դասակարգման տեսանկյունից՝ ընդհանուր ծախսերի փաստացի և ճշտված ցուցանիշների 36.5% ճեղքվածքի 22.7 տոկոսային կետը պայմանավորված է «տնտեսական հարաբերությունների» ծախսերի թերակատարմամբ, 3.8 տոկոսային կետը՝ «կրթության» ծախսերի թերակատարմամբ, իսկ 2.3 տոկոսային կետը՝ «շրջակա միջավայրի պաշտպանության» ծախսերի թերակատարմամբ: Նշենք նաև, որ «տնտեսական հարաբերությունների» ծախսերի թերակատարումը պայմանավորված է տրանսպորտի ոլորտին ուղղված, ինչպես նաև վառելիքի և էներգետիկայի ոլորտին առնչվող ծախսերով:

4. ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ


2020 թվականին Երևանի բյուջեն կատարվել է 9.1 մլրդ դրամ հավելուրդով՝ ճշտված պլանով նախատեսված 16.4 մլրդ դրամ պակասուրդի դիմաց (Աղյուսակ 5): Սա նշանակում է, որ փաստացի ցուցանիշի շեղումը ճշտված պլանից կազմել է 25.5 մլրդ դրամ, ինչը չափազանց բարձր ցուցանիշ է: Հատկանշական է, որ փաստացի և հաստատված ցուցանիշների տարբերությունը առավել համեստ է՝ 18.2 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ 2019 թվականին Երևանի բյուջեում ձևավորվել էր հավելուրդ՝ 8.3 մլրդ դրամի չափով:

Աղյուսակ 5. Երևանի բյուջեի հավելուրդը (պակասուրդը) և դրա կատարողականը 2020թ. (մլն դրամ)

	Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման %-ը հաստատված պլանի նկատմամբ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտներ	107,146.8	84,941.6	73,364.3	68.5%	86.4%
Ծախսեր	116,259.6	101,308.5	64,300.8	55.3%	63.5%
Ընդամենը հավելուրդ կամ պակասուրդը	-9,112.8	-16,366.9	9,063.5	-	-
Վարչական բյուջե	0.0	-23.4	6,836.2	-	-
Ֆոնդային բյուջե	-9,112.8	-16,343.4	2,227.4	-	-

Աղյուսակ 5-ը մատնանշում է, որ հավելուրդի 75.4%-ը ձևավորվել է վարչական, իսկ 24.6%-ը՝ ֆոնդային բյուջեի շրջանակներում: Հատկանշական է, որ ճշտված պլանը երկու ուղղությամբ էլ նախատեսում էր եկամուտների մակարդակը գերազանցող ծախսերի իրականացում, այսինքն՝ պակասուրդի գոյացում:

Գծապատկեր 4. Երևանի բյուջեի հավելուրդի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները 2020թ.



Ինչպես ներկայացված է Գծապատկեր 4-ում, 2020 թվականի ճշտված բյուջեով նախատեսվում էր ծրագրված 16.4 մլրդ դրամ պակասուրդի 89.0%-ը՝ 14.6 մլրդ դրամը, ֆինանսավորել ֆինանսական ակտիվների հաշվին, իսկ 11.0%-ը՝ 1.8 մլրդ դրամը՝ փոխառու միջոցների հաշվին: Գործնականում, սակայն, իրադարձությունները զարգացել են այլ ուղղությամբ. ձևավորվել է էական հավելուրդ՝ 9.1 մլրդ դրամի չափով, որը ամբողջությամբ ֆինանսավորվել է ֆինանսական ակտիվների հաշվին:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

2020 թվականը փորձություններով լի տարի էր ՀՀ քաղաքացիների կյանքում: Նախ՝ կորոնավիրուսային համավարակը պատճառ դարձավ էական կորուստների երկրի սոցիալական, տնտեսական և առողջապահական ոլորտներում: Այնուհետև՝ Արցախյան պատերազմը անդառնալի հետք թողեց հայ ժողովրդի կյանքում՝ հանգեցնելով մարդկային, տարածքային և բարոյահոգեբանական կորուստների: Այս գործոնները, ինչպես և ենթադրվում էր, չբրջանցեցին նաև հանրային ֆինանսների ոլորտը, ընդ որում՝ ինչպես պետական, այնպես էլ համայնքային բյուջեների առումով: Արդյունքում էապես կրճատվեցին պետության՝ տնտեսական անկմանը հակազդելու հնարավորությունները՝ քաղաքացիներին և կազմակերպություններին զրկելով իրենց ֆինանսական վիճակի բարելավման հույսերից:

Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեն կատարվել է չափազանց մեծ թերացումներով: Ճշտված պլանի նկատմամբ ընդհանուր եկամուտների հավաքագրումը կազմել է 86.4%՝ 73.4 մլրդ դրամ՝ 84.9 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, թերակատարումը հիմնականում պայմանավորված է այլ եկամուտների փաստացի և ճշտված ցուցանիշների ճեղքվածքով: Այս ճեղքվածքը, իր հերթին, մեծ մասամբ կապված է «համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (պատվիրակված լիազորություններ)» հոդվածի հետ: Ինչ վերաբերում է պաշտոնական դրամաշնորհների ճեղքվածքին, ապա այն հիմնականում կապված է «համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով» հոդվածով:

2020 թվականի փաստացի արդյունքներով՝ ընդհանուր ծախսերը կազմել են 64.3 մլրդ դրամ՝ 101.3 մլրդ դրամ ճշտված պլանի դիմաց: Այլ կերպ ասած՝ Երևանի բյուջեի ծախսերը կատարվել են միայն 63.5%-ով: Տնտեսագիտական դասակարգման տեսանկյունից՝ 36.5% թերակատարումը հիմնականում պայմանավորված է ընթացիկ ծախսերի, իսկ գործառնական դասակարգման տեսանկյունից՝ «տնտեսական հարաբերություններ» ծախսերի փաստացի և ճշտված ցուցանիշների ճեղքվածքով:

Ուշադրության են արժանի, օրինակ, հետևյալ ծախսային հոդվածների թերակատարումները.

- Ծախսերի գործառնական դասակարգման «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» հոդվածի «ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ» ենթահոդվածի պարագայում տարեկան ճշտված պլանով նախատեսված 384.3 մլն դրամի փոխարեն փաստացի ծախսվել է 143.7 մլն դրամ՝ թերակատարելով պլանը 62.6%-ով: Ակնհայտ է, սակայն, որ հետազոտական աշխատանքները անմիջականորեն կապված չեն տեղաշարժի սահմանափակումների հետ և կարող էին իրականացվել նաև առցանց համագործակցության միջոցով:
- Գործառնական դասակարգման «կրթություն» հոդվածի «միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» ենթահոդվածի տարեկան ճշտված պլանով նախատեսված 370.7 մլն դրամի փոխարեն փաստացի ծախսերը կազմել են 299.2 մլն դրամ՝ խնայելով 71.5 մլն դրամ: Սա այն պարագայում, երբ առցանց դասերին անցնելը, վստահաբար, մարտահրավերներ է առաջացրել անապահով ընտանիքների երեխաների համար, որոնք համակարգիչ

չունենալու պատճառով կարող են զրկվել Սահմանադրությամբ նախատեսված՝ կրթություն ստանալու հիմնարար իրավունքից:

- Տնտեսագիտական դասակարգման «ընթացիկ ծախսեր» հոդվածի «սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստներ» ենթահոդվածի փաստացի ծախսերը կազմել են 721.9 մլն դրամ՝ տարեկան ճշտված պլանով նախատեսված 779.5 մլն դրամի փոխարեն՝ կատարելով պլանը 92.6%-ով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական գործունեության սահմանափակումների պատճառով շատերը կորցրել են աշխատանքը, և ավելի է ծանրացել անապահով խավի վիճակը՝ կարելի է փաստել, որ նախատեսված միջոցները ըստ առաջացած կարիքների ծախսելու դեպքում կառաջանար գերաժախս, ոչ թե խնայողություն:
- Տարակուսելի է հատկապես «առողջապահության» ծախսերի հոդվածում արձանագրված խնայողությունը: Տարեկան ճշտված պլանով նախատեսված 511.2 մլն դրամից 2020-ի ընթացքում ծախսվել է ընդամենը 300.1 մլն դրամը՝ ապահովելով ծրագրի իրականացում միայն 58.7%-ով: Ավելին, կարելի է ենթադրել նաև, որ այս խնայողություններով հանդերձ՝ նոր կորոնավիրուսով վարակված շատ քաղաքացիներ ժամանակին չեն ստացել պահանջվող բժշկական օգնությունը, ինչը ավելի է սրել ստեղծված իրավիճակը:

Ծախսերի նման ծավալի և որակի թերակատարման պայմաններում 2020 թվականին Երևանի բյուջեն կատարվել է 9.1 մլրդ դրամ հավելուրդով՝ ճշտված պլանով նախատեսված 16.4 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Այլ կերպ ասած՝ փաստացի ցուցանիշի շեղումը ճշտված պլանից կազմել է 25.5 մլրդ դրամ, ինչը չափազանց բարձր ցուցանիշ է:

Ավագանու 2021 թվականի մարտի 16-ի նիստի ժամանակ՝ Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը ներկայացնելիս, Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Ներսիսյանը բյուջետային ծախսերի ծայրահեղ ցածր կատարողականը բացատրեց հետևյալ կերպ. 2021 թվականի հունվարին ընդունվել է օրենք ինքնական շինությունների օրինականացման վերաբերյալ (մինչև հունվարի 31-ը ներկայացված դիմումների հիման վրա), ինչի արդյունքում ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի գծով 2020 թվականի համար ապահովվել է հավաքագրում՝ նախատեսվածից 7 մլրդ դրամով ավելի: Այս գործոնը արհեստականորեն նվազեցրել է ծախսերի կատարողականը: Բացի այդ, վերելակների փոխարինման ծրագրի մասով շուրջ 2.5 մլրդ դրամի վճարումը տեղափոխվել է 2021 թվական, քանի որ տեղադրման աշխատանքները ամբողջությամբ չեն ավարտվել: Երրորդ գործոնը վերաբերում է ավտոբուսների ձեռքբերմանը, որի դեպքում 1 մլրդ դրամ տեղափոխվել է 2021 թվական, քանի որ այդ մասով հանձնման-ընդունման փաստաթղթերը ձևակերպվել են 2021 թվականի

համար: Այս գործոնների հաշվառման պարագայում կատարողականի ցուցանիշը կկազմի շուրջ 74%: Ինչ վերաբերում է եկամուտներին, Ս. Ներսիսյանը թերակատարումը ամբողջությամբ պայմանավորեց նոր կորոնավիրուսի հարուցած ճգնաժամով և պատերազմով:

Անկախ պատճառից և ներկայացվող պատճառաբանությունից՝ բյուջետային ծախսերի թերակատարումը խիստ անցանկալի է հատկապես ներկա պայմաններում, երբ մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների պահանջարկը չափազանց թույլ է, և տնտեսության աշխուժացումը մեծապես կախված է գործող իշխանության գործողություններից: Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ ամենամեծ նպաստումը ընդհանուր ծախսերի թերակատարմանը ձևավորվել է տնտեսական հարաբերությունների ծախսերի ուղղությամբ: Այս պարագայում բավական մոայլ են քաղաքային տնտեսության զարգացման, ինչպես նաև ենթակառուցվածքների բարելավման հեռանկարները: Հետևաբար, ճգնաժամային իրավիճակի հաղթահարումը պահանջում է արմատապես վերանայել բյուջետային պլանավորման և ծրագրերի իրագործման գործընթացները Երևան քաղաքում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**